



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

17 փետրվարի 2023թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Գրիգորյանի  
Անդամակցությամբ՝ Ա. Թունյանի  
Ե. Խունդկարյանի

Քննության առնելով Սուայան Թարամովի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Սուայան Թարամովը (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Անդրանիկ Մանուկյան) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2023 թվականի փետրվարի 6-ին)՝ խնդրելով.

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասն՝ այնքանով, որքանով չի արգելում այլոց իրավունքներն ու ազատությունները հանրային ամենամեծ վրանգավորության արարքի՝ հանցագործության կատարմամբ վնասող անձին, այդ թվում՝ ազգությամբ հային ՀՀ քաղաքացիություն տրամադրել և դրանով իսկ այդ անձի կողմից կատարված հանցավոր արարքից տուժած անձին

զրկում է իր նկատմամբ կատարված հանցավոր արարքի դեպքով հանցագործության կատարման վայրում արդյունավետ և արդարացի քննության, այդ թվում՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքից, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին և 47-րդ հոդվածի 7-րդ մասին հակասող ու անվավեր:

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասն՝ այնքանով, որքանով ուղղակիորեն չի սահմանում, որ անձին, այդ թվում՝ ազգությամբ հային ՀՀ քաղաքացիություն չի տրամադրվում, եթե առկա է այդ անձի կողմից այլ անձանց իրավունքներն ու ազատությունները հանցագործության կատարմամբ վնասելու մասին վկայող տվյալ և դրանով իսկ ինչպես իրավունքի հասցեատիրոջ, այնպես էլ իրավունքի իրացումն ապահովող մարմնի՝ պետության համար բավարար չափով հստակ ու կանխատեսելի չի սահմանում, թե արդյոք հանցանք կատարած լինելու բերումով հետախուզման մեջ գտնվող անձը կարող է ՀՀ քաղաքացիություն ձեռք բերել, թե՛ ոչ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Դիմողը հայտնում է, որ իրենից առանձնապես խոշոր չափի գումար հափշտակելու դեպքի առթիվ Ռուսաստանի Դաշնությունում հարուցված քրեական գործով որպես մեղադրյալներ ներգրավված նույն պետության՝ ազգությամբ հայ քաղաքացիներին, որոնք գտնվել են միջազգային հետախուզման մեջ, շնորհվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, որի պատճառով Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ ստեղծվել է իրավական արգելք վերջիններիս Ռուսաստանի Դաշնությանն արտահանձնելու համար, և արդյունքում մեղադրյալներն իրենց կատարած հանցանքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել: Նշվում է, որ հիշյալ անձանց ապօրինաբար Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու դեպքի առթիվ 2020 թվականի փետրվարի 26-ին գլխավոր դատախազությունում հարուցվել է քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Դիմողը նշում է, որ 2021 թվականի օգոստոսի 31-ին նախաքննական մարմինը կայացրել է ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության համա-

պատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում՝ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ վերջիններիս արարքների մեջ Քրեական օրենսգրքի 308-րդ և 315-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմեր չկան: Նախաքննական մարմնի հիշյալ որոշմամբ արձանագրվել է, որ «Քաղաքացիության մասին» օրենքով և Կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշմամբ անձի՝ հետախուզման մեջ լինելու հանգամանքը՝ որպես քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու հիմք, նախատեսված չէ, և որ քրեական գործի նախաքննությամբ կատարված քննչական և դատավարական գործողությունների արդյունքում պարզվել և հիմնավորվել է, որ հիշյալ անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու հարցում օրենսդրությամբ նախատեսված որևէ խոչընդոտ առկա չի եղել:

Դիմողը հայտնում է, որ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2021 թվականի օգոստոսի 31-ի որոշումը բողոքարկել է դատախազին, ապա նաև՝ դատարան: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վերաքննիչ քրեական դատարանի կողմից Դիմողի ներկայացրած համապատասխան բողոքները մերժվել են, իսկ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի 2023 թվականի հունվարի 27-ի որոշմամբ մերժվել է:

Դիմողը նշում է, որ հանցագործությամբ իրեն առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառած անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու գործընթացում ներգրավված և այդ անձանց՝ քաղաքացիություն շնորհելու դիմումը բավարարելու ընթացքում առերևույթ իրենց պաշտոնեական լիազորությունները չարաշահած կամ պաշտոնեական անփութություն թույլ տված և դրանով իսկ վերջիններիս Ռուսաստանի Դաշնությանն արտահանձնումը խոչընդոտած պաշտոնատար անձանց վերաբերյալ իր գործի արդարացի քննության իրավունքի (Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մաս) իրացման անհնարինություն է առաջացրել հենց «Քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի փաստացի կիրառումը, քանզի հիշյալ դրույթի փաստացի կիրառմամբ է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հիմնավոր համարել նախա-

քննական մարմնի կողմից քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կայացնելու հիմք հանդիսացած այն հետևությունը, որ «վարույթն իրականացնող մարմնի համոզմամբ քաղաքացիություն ստանալու համար դիմած անձանց հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը ստուգելու պարտականության չսահմանումը պայմանավորված է նրանով, որ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ քաղաքացիություն ստանալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշմամբ անձի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը, որպես ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու հիմք, նախատեսված չէ»: Դիմողը հավելում է նաև, որ հիշյալ հետևությանը, համապատասխանաբար՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ի և 2023 թվականի հունվարի 27-ի դատական ակտերով, համաձայնել են վերաքննիչ քրեական և Վճռաբեկ դատարանները:

Սահմանադրության 3-րդ հոդվածի լույսի ներքո անդրադառնալով Սահմանադրության 47-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված՝ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի սահմանափակման՝ «այլ հանրային շահերի պաշտպանությունը» հիմքին՝ Դիմողը գտնում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների հարգմանն ու պաշտպանությանն ուղղված երաշխիքների համակցությունն է, որ այս պարագայում ձևավորում է «հանրային շահ» հասկացությունը՝ կազմելով դրա բովանդակությունը: Ըստ Դիմողի՝ Սահմանադրության 47-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսված՝ իրավունքի սահմանափակման հիշյալ հիմքը տեղ է գտել «Քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասում, որից հետևում է, որ եթե անձը, այդ թվում՝ ազգությամբ հայը, վնասում է այլոց իրավունքներն ու ազատությունները, ապա այդպիսի անձին քաղաքացիություն չի տրվում՝ նկատի ունենալով, որ դա կարող է հանգեցնել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու ուղղությամբ պետության ստանձնած պարտականության խախտմանը:

Դիմողը պնդում է, որ այլոց իրավունքները և ազատությունները կարող են վնասվել նաև հանցագործությամբ, և քրեադատավարական կարգով հետախուզման մեջ գտնվելու հանգամանքն արդեն իսկ վկայում է, որ առկա է անձի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ ապացույցների բավարար համակցություն, կամ

«Քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի իմաստով անձը վնասել է այլոց իրավունքներն ու ազատությունները, և հետևաբար՝ նույն դրույթի ուժով՝ անձի՝ քրեադատավարական հիմքով հետախուզման մեջ գտնվելու փաստը վերջինիս քաղաքացիություն շնորհելը մերժելու հիմք է: Դիմողը շեշտադրում է նաև, որ այլոց իրավունքներն ու ազատությունները հանցագործությամբ վնասելու հանգամանքն այս համատեքստում միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով չէ, որ կարող է հաստատապես փաստվել, քանի որ հակառակ մոտեցման պարագայում ուղղակիորեն արգելակվում է անձի՝ հետախուզումը նախաձեռնած քրեական հետապնդման մարմնի իրավազորության ներքո հայտնվելու և կատարված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկվելու ընթացքը:

Դիմողը նշում է, որ չնայած վերը ներկայացվածին՝ «Քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասը, այնուամենայնիվ, որոշակիորեն չի սահմանում, որ անձին (այդ թվում՝ ազգությամբ հային) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չի տրամադրվում, եթե առկա է այդ անձի կողմից այլ անձանց իրավունքներն ու ազատությունները հանցագործության կատարմամբ վնասելու մասին վկայող տվյալ, մասնավորապես՝ պաշտոնական տեղեկություն այն մասին, որ նշված անձը գտնվում է հետախուզման մեջ, և գտնում, որ այդքանով հիշյալ դրույթը հակասում է Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին և 47-րդ հոդվածի 7-րդ մասին, քանզի այս նորմերը երաշխավորում են, որ անձը չստանա Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե դա կարող է հանգեցնել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու ուղղությամբ պետության ստանձնած պարտականության խախտմանը: Այդ պարտականության խախտումը, ըստ Դիմողի՝ «կդրսևորվի նրանում, որ, այլոց իրավունքներն ու ազատությունները (...) [հանցագործությամբ] վնասած անձին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն տրամադրելով, պետությունը տուժած անձին կզրկի կատարված հանցավոր արարքի դեպքով արդյունավետ ու արդարացի քննության, այդ թվում՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքից»:

Ըստ Դիմողի, չնախատեսելով, որ անձին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չի տրամադրվում, եթե առկա է նրա կողմից այլ անձանց

իրավունքներն ու ազատությունները հանցագործության կատարմամբ վնասելու մասին վկայող տվյալ, մասնավորապես՝ պաշտոնական տեղեկություն, որ նշված անձը գտնվում է հետախուզման մեջ, «Քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ ինչպես իրավունքի հասցեատիրոջ, այնպես էլ պետության համար բավարար չափով հստակ ու կանխատեսելի չի սահմանում, թե արդյոք հանցանք կատարելու բերումով հետախուզման մեջ գտնվող անձը կարող է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերել, թե՛ ոչ:

Դիմողը պնդում է նաև, որ հետախուզման մեջ գտնվող անձին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու հարցում առկա է իրարամերժ պրակտիկա՝ նշելով, որ նույնանման մեկ այլ գործով իրավակիրառն անձի՝ հետախուզման մեջ գտնվելը դիտել է որպես վերջինիս՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու հիմք, ինչպես նաև ներկայացնելով, որ արդարադատության նախարարությունից իրեն տրամադրված պարզաբանման համաձայն՝ հետախուզման մեջ գտնվելը վերջինիս՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը բացառող հանգամանք է, իսկ քրեական գործի նյութերում առկա է նախաքննական մարմնի հարցմանն ի պատասխան ոստիկանությունից ստացված՝ հակառակի մասին գրություն:

**3.** Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

**3.1.** Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ

կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց հնարավորություն է ընձեռել դիմելու Սահմանադրական դատարան միայն կոնկրետ գործով կայացված վերջնական դատական ակտով իրենց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը որոշելու հարցով, եթե դրա հակասահմանադրականությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված՝ դիմողի որևէ հիմնական իրավունքի կամ ազատության խախտման:

Սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշման համաձայն՝ իրավական նորմերի կոնկրետ վերահսկողությանը «բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը»:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 21-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ դիրքորոշում է հայտնել առ այն, որ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող դրույթի և իր իրավունքի խախտման միջև:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի մարտի 10-ի ՍԴԱՌ-49 աշխատակարգային որոշմամբ նշել է. ««Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Միաժամանակ, դիմողը պետք է նաև հիմնավոր և պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր ո՛ր սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքի ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, որոնք չպահպանելը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է: Այսինքն՝ օրենսդրական նշյալ պահանջի լույսի ներքո անհատական դիմումը պետք է պարունակի՝



1. իրավական հիմնավորումներ, փաստարկներ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ,

2. իրավական հիմնավորումներ առ այն, թե իր սահմանադրական ո՛ր իրավունքներն են խախտվել,

3. իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ իրավական հիմնավորումներ:

Ընդ որում, այս պահանջների միաժամանակյա առկայության պարագայում միայն կարելի է փաստել, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն չէ»:

**3.2.** Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Սահմանադրության 47-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև 5-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանված [Հայաստանի Հանրապետության քաղաքացու երեխայի, ազգությամբ հայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու] իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

«Քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է, կամ առկա է հիմնավոր կասկած, որ կարող է վնասել պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և

ազատություններին, պատվին և բարի համբավին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել:

**3.3.** Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ ներկայացված դիմումն ակնհայտ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է հանրային իշխանության և անձանց միջև ծագող սահմանադրական կապերի հիմունքները՝ նախատեսելով, որ հանրային իշխանության պարտականություններն են հարգել ու պաշտպանել հիմնական իրավունքները և ազատությունները, սակայն ինքնին չի բովանդակում անձի որևէ հիմնական իրավունք կամ ազատություն, որն ամրագրված է Սահմանադրության 2-րդ գլխում:

Սահմանադրության 47-րդ հոդվածի 7-րդ մասը նախատեսում է նույն հոդվածի 2-4 մասերով, 5-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանված քաղաքացիություն ձեռք բերելու, քաղաքացիությունը փոխելու իրավունքների սահմանափակման նպատակները: Իր հերթին, սույն դիմումը չի վերաբերում Դիմողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու կամ այն փոխելու իրավունքի՝ Սահմանադրությանը չհամապատասխանող սահմանափակմանը, այլ ներկայացվում է, որ Դիմողի համար ենթադրյալ բացասական հետևանքները կապված են այլոց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հետ:

Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Սահմանադրության 79-րդ հոդվածով առաջադրվում է հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակող օրենքների՝ իրավական որոշակիությանը համապատասխանելու պահանջ: Դիմողն իր հերթին առաջադրում է Սահմանադրության 47-րդ հոդվածով նախատեսված քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի սահմանափակման հիմքերին վերաբերող «Քաղաքացիության մասին» օրենքի վիճարկվող դրույթի՝ իրավական որոշակիության պահանջին չհամապատասխանելու հարց, այնինչ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումն առհասարակ չի վերաբերում Դիմողի՝ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի սահմանափակմանը:

Այսինքն, դիմումում բացակայում է վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը Սահմանադրության 2-րդ գլխի 47-րդ հոդվածով

նախատեսված որևէ իրավունքի կամ ազատության խախտմանը հանգեցնելու վերաբերյալ հիմնավորում:

**3.4.** Բացի դրանից, Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ քրեական գործով դիմողի սահմանադրական իրավունքների խախտման վերաբերյալ դիմումում առկա է եզակի նշում այն մասին, որ սույն դիմումով վիճարկվող դրույթը, որին տրված մեկնաբանությունը դատարանները հետազայում համարել են հիմնավոր կամ իրավաչափ, նրա համար առաջացրել է իրավական հետևանք, այն է՝ վերջինս զրկվել է իրեն առանձնապես խոշոր չափերով գույքային վնաս պատճառած, հետախուզման մեջ գտնվող անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու գործընթացում ներգրավված և նրանց քաղաքացիություն շնորհելու դիմումը բավարարելու ընթացքում առերևույթ պաշտոնական լիազորությունները չարաշահած և դրանով իսկ այդ անձանց արտահանձնումը խոչընդոտած պաշտոնատար անձանց վերաբերյալ իր գործի արդարացի քննության իրավունքից՝ նախատեսված Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ դիմումում չի ներկայացվել վիճարկվող դրույթի (ներառյալ՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) հակասահմանադրականության և Դիմողի քրեական գործով՝ Սահմանադրության 63-րդ հոդվածով սահմանված իր արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ որևէ խախտման միջև պատճառահետևանքային կապի առկայության հիմնավորում: Փոխարենը Դիմողը ներկայացնում է, որ Սահմանադրության 3-րդ և 47-րդ հոդվածներին համահունչ՝ «Քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասից հետևում է, որ այլոց իրավունքները և ազատությունները հանցագործությամբ վնասած անձինք Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չեն ստանում, և որ նրանց քաղաքացիություն շնորհելը մերժելու հիմք է քրեադատավարական հիմքով հետախուզման մեջ գտնվելու փաստը, ինչն էլ, ըստ Դիմողի, անտեսվել է վիճարկվող նորմերի՝ իրավակիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանությամբ:

Վերը ներկայացվածի հիման վրա՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը եզրահանգում է, որ սույն դիմումը չի պարունակում հիմնավորումներ վիճարկվող իրավական դրույթի՝ Դիմողի ներկայացրած հիմնավորումներով հակասահմանադրականության և իր՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված որևէ իրավունքի կամ ազատության ենթադրյալ խախտման միջև առկա պատճառահետևանքային կապի վերաբերյալ: Հետևաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով սույն դիմումն ակնհայտ անհիմն է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և նույն հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 5 և 6-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Սույլյան Թարամովի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



Վ. Գրիգորյան

Ա. Թունյան

Ե. Խունդկարյան

17 փետրվարի 2023 թվականի  
ՍԴԴԿՈ-6